



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


4752

ՀՈՌԿՄԱՅ

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԿԱՐՆԵՑՆԱԼ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ

ՏԵՏՐ ԱՌԱՋԻՆ



Կ Ե Ե Տ Ի Ե Կ Ե Կ Ի Գ Ե Ի Կ Ե Ի Կ Ե Ի

1871

282

2-92



82  
-92  
45

Յետագայ յօդուածն որ՝ Հռովմայու լա Գա-  
բիթալէ անուն լրագրոյն 261 թուոյն մէջ կար-  
դացուած է՝ որն որ Հռովմայ Գահանայապետա-  
կան ակթուոյն կարծեցեալ նախագահութեանը  
վրայ կը խօսի : Նոյն լրագիրը Ս. Պետրոսի ակ-  
թուոյն կեղծ ըլլալն ուրիշ յօդուածով մ'ալ կը  
յայտնէ, որ մօտերս պիտի հրատարակուի :

Պ Ա Պ Ե Ր Ը

Յայտնի է որ կղերականք Պիոս Թ. ին գահա-  
կալութեան քսանուհինգերորդ տարեդարձը աօ-  
նախմբեցին :

Արդէն կիմացուի որ Պիոս Թ. ին անձը չէր մե-  
ծարեւին այլ սոսկ Պապութեան շքոյն հանդէպ  
կատարուեցաւ :

Բոլոր այն միջոցին Հռովմայ մէջ ուրիշ բան  
չէր կարդացուեր, բայց միայն քանի մը գրքոյդ-  
ներ՝ որոնք կ'զուլէին զՊապութիւնը, իբր աղբիւր  
անհամեմատ բարերարութեանց իտալիոյ, իբր  
պաշտպան ազգային անկախութեան և իբր օգ-  
տամատոյց յառաջադիմութեան : Եւ վայ անոր որ  
ղայր ամեն այն ժխտելու համարձակէր, անշուշտ Ս.  
Հրեշտակի աշտարակին գաղանամածուկ բանա-  
բու մէջ փստելու կ'դատապարտուէր :

Ստուգիւ գիտեմք, որ նոյն իսկ ուղղափառաց  
մէջ կայ բաղմամբիւ խուճը մը, որն որ՝ եթէ ճանչ-  
նար թէ Պապական իշխանութեան պատմութիւնը  
ինչ չափ ճշմարտութենէ թերի է, փոխանակ փա-









ըլլար, հարկ էր որ զեկեղեցին Հռովմայ ոչ միայն առաքելական բռնէր, այլ նաև դէլիաւոր և վեհադոյն քան զամենայն առաքելական եկեղեցիս : Սակայն ի են պատմութեան մէջ և ոչ նշանակեց մի կայ՝ որով ս բոյն Պետրոսի 'ի Հռովմ գտնուելը և հոն եկեղեցի հաստատելը հետևի : Եթէ սուրբն Ղուկաս ամենափոքր դէպքերը կը պատմէ, ինչո՞ւ Հռովմայ եկեղեցւոյն հիմնարկութիւնը պիտի ըլնուէր, որ ասանկ երևելի և ամենահարկաւոր կը ատր մըն է : Առաջին եկեղեցին՝ Մնտիոքայ եկեղեցին եղաւ և արդեա՛րք ալ գիտեմք որ շատ եպիսկոպոսներ՝ սրբոյն Յուլիոսի՝ որն որ իրենց յանդիմանութիւն խ կած էր, պատասխանեցին թէ, չխառնուի այն բանին՝ որ ի են չարտկանիր : Եւ ահա այսչափ հեռի էին այս եպիսկոպոսները Հռովմայ եկեղեցւոյն դէլիաւորութիւնը ճանչնալէն :

Այս դէպքը այնպիսի ժամանակ մը պատահեցաւ՝ յորում ոչ ոք կրնար անգիտանալ Հռովմայ դէլիաւորութիւնը՝ եթէ այն օրինաւորապէս հաստատուած ըլլալու ըլլար :

Սուրբն Պօղոս իւր թղթոց մէջ ամենևին յիշատակութիւն մը չընէր սրբոյն Պետրոսի և անոր Հռովմայ եկեղեցւոյն վրայ ունեցած իշխանութեանը վրայ : Միայն ս բոյն Պօղոսի 'ի Հռովմ գալըտեանը վրայ ապացոյցներ, շատ կան : Ինքն եկաւ 'ի Հռովմ՝ 57 ին և հոն ք իտտոնէից պղտիկ միտրանութիւն մը հաստատեց, որն որ գրեթէ Ա. եւ յիցինէ կը բաղ կանար : Այս միտրանութեան

կառավարութիւնը յանձնեց Ալիւզասայ նորադարձ էբրայեցւոյն և անոր կնոջը Պիլիկիլային :

Ինչ որ այնուհետև պատահեցաւ՝ յայտնի եղանակաւ կցուցունէ թէ՛ ինչպէս սուտ է սրբոյն Պետրոսի եկեղեցւոյն կարծեցեալ հիմնարկութիւնը :

Հռովմայական եկեղեցին՝ առաջին դարուն վերջերը և երկրորդ դարուն սկիզբները միայն՝ Աքայիոյ եկեղեցեաց իշխանութիւնը որդեգրելով՝ ոչ թէ Պապ մի իւր վրայ գլուխ հաստատեց, այլ՝ « վերատեսուչ » մի դրաւ, որ Յունարէն « Եպիսկոպոս » կանուանի :

Ուստի ժաղրելի բան է ամենևին առաջին դարուն Պապերուն վրայ խօսիլը՝ որոնք անդոյ էին տակաւին : Հռովմայական եկեղեցին այնպիսի անշուք վիճակի մէջ էր այն ժամանակները, որ ամենևին ուրիշ եկեղեցեաց գործոց միջամտութիւն չէր ընէր, այնպէս խոնարհ՝ որ երբոր հերետիկոս Մարկիոնը 'ի Հռովմ գնաց 150 ին, իր հօրէն, որ եպիսկոպոս էր, ընդունած բանադրանքէն արձկուելու համար, Հռովմայեցւոց քահանաները, որոնք այնպիսի փսեմ իշխանութիւն մը չէին սեփականած՝ ( զորն որ շատ դարերէ վերջը գրաւեցին ), յետս դարձուցին զՄարկիոն առ որ զինքն բանադրած էր, խոստովանելով իրենց անկարողութիւնը զինքն բանադրանքէն արձկելու :

Երկրորդ դարուն վերջերը վիկտոր Հռովմայ եպիսկոպոսը բանադրեց Ասիականները, բայց ասոնք ալ զինքը բանադրեցին, այս բանիս համար կշտամբեցաւ նաև յիրենիոնէ լիոնի եպիսկոպոսէն



և 'ի Սրբոյն Պողիկարպոսէ՝ որն որ յանդիմանաւան թուղթ մը գրեց իրեն : Երրորդ դարուն մէջ Հը առվմայ եպիսկոպոսը ( տակաւին Հկային Պապեր ) կը դժտի սրբոյն Կիպրիանոսի կարգադինեայ եպիսկոպոսին հետ . փոփոխակի կը բանադրեն մէկըմէկ , սակայն սուրբն Օգոստինոս յանցաւոր կը դատէ զՀռովմայ եպիսկոպոսը :

Մը էր արդեօք այն ժամանակը Հռովմայ եկեղեցւոյն նախագահութիւնը :

Գրեթէ մի և նոյն ժամանակը երկու աթոռա դուրկ Սպանիացի եպիսկոպոսներ դիմեցին Ստեփաննոս եպիսկոպոսին որն որ դարձեալ զիրենք իրենց աթոռոյն վրայ հաստատեց : Այս բանիս վրայ ուրիշ եպիսկոպոսները դանդաւեցան Սրբոյն Կիպրիանոսի , որն որ գրեց իրենց թէ , Հ'Տը նազանդին բնաւ Ստեփաննոսին հրամանին , և թէ այս երկու եպիսկոպոսները մեղք մեղքի վրայ դիզած էին դիմելով օտար եպիսկոպոսի մը :

Ինչպէս ուրեմն Սուրբն Օգոստինոս և Սուրբրն Կիպրիանոս կրնային անգիտանալ , մանաւանդ թէ հակառակիլ իսկ Հռովմայ եկեղեցւոյն նախագահութեանը դէմ , եթէ իրական վիճակի մէջ ըլլար այն : Սրբոյն Օգոստինոսը ( ինչպէս որ կրնայինք շատ օրինակներ յառաջ բերել , բայց հատուածնիս չերկարելու համար , զանց կը նենք :

Երկու դար ամբողջ նախագահութիւնը ոչ թէ Հռովմայ եկեղեցւոյն այլ Աղեքսաղրիոյ աթոռոյն ձեռքն էր , և Հերակլէս այս քողքիս եպիսկոպո-

սը , 231 ին առաջինը եղաւ որ “ ամեներջանիկ Պապ ” , ախղոսին արժանի եղաւ , այն սխալօսին , որով պատուեցաւ նաև Սուրբն Կիպրիանոս : Միտդենք որ այս ախղոսը մեռելոց միայն կը արուէր , ըստ սովորութեան Հռովմայեցւոյ որոնք “ Աստուած ” և կամ “ Սուրբ ” կը կոչէին իրենց վախճանեալ կայսրները : Սուրբն Հերոնիմոս առաջինը եղաւ , որն որ կամ չաղքորթութեան և կամ շքեղութեան համար գործածեց այս ախղոսը նա և կենդանեաց համար , զոր օրինակ Սրբոյն Ամբրոսիոսի , Կրոնատիոսի , Օգոստինոսի և Դամասոսի :

Կղերականները որոնք միշտ կարծել սուած են , թէ Սուրբն Ատրոս առաջին Պապը եղած ըլլայ , դժգոհ պիտի ըլլան մեր այս դէպքը ծանուցանելուս համար , որովհետև ասով տօնուած հանդէսը շատ պիտի անչքանայ . սակայն ինչ ընենք , պատմութիւնը չկրնար անհետ ըլլալ և ոչ կրնայ թոյլ տալ որ Սիոս Թ . Ը Սրբոյն Ատրոսի յաջորդ անուանի :

Տեսանք նախընթաց հատուածին մէջ թէ ինչպէս Քահանայապետին կարծեցեալ նախագահութիւնը անհիմն է ամենեին , և թէ արդիւնք է միայն դարական յափշտակութեանց :

Չորրորդ դարուն մէջ Պապերուն իրաւասութիւնը Հռովմայ շրջակայ գաւառներէն դուրս չէր ելլար , այսինքն հարիւր միոն քան զշրջապոսան Հռովմայ , և այս իրաւասութիւնը քաղաքապետին կը պատկանէր , որովհետև ուղղափառ եկեղեցւոյ կարգադրութիւնը Հռովմեական վայս-



րութենէ փոխ առնուած է, ամեն բան կերպարանեցաւ այն քաղաքխտական կարգին վրայ, նաև պատերն իսկ անուանեցան « գերագոյն քահանայապետ », յափշտակեցին նաև « Սրբութեան » և « ամենապրոյ » տիտղոսները, որոնք Օգոստոսներու կը պատկանէին. յափշտակեցին Հռովմայեցւոցմէ զժիրանին, քղամիդը, փորուրարը, գօսին և այլ ուրիշ նշանները :

Մէկ քայլ ևս յառաջ դացին Պապերը, ստանք որ իրենք զիրենք « անսխալ » հրատարակեցին, բայց արդէն Պապերը գերագոյն քան զՊատուած զանձինս կը համարէին. որովհետև Պապը քահանայապետական պատարագին մէջ սկզբնաւորութիւնը միայն կընէ, և վերջը իւր գահը դառնալով կը ձգէ որ իւր կարգինախնելը զայն աւարտեն. ճաշակւան ժամանակը երկու պատարագիչք իրեն կը բերեն սրբագործեալ նշխարը և Պապին սուրբին առջև դալով երկրպագութիւն կը մատուցանեն իրեն. այն ատեն քահանայապետը դահէն մէկ աստիճան վար կիջնայ մօտենալու համար իւր Աստուծոյն, և Աստուած ալ հինգ աստիճան վեր կելլայ իբր թէ Պապին մերձենալով պատիւ մը ստացած ըլլար :

Մեղիդանու, Աքուիլիայ և Հռավեննայի եկեղեցիները անկախ էին միշտ ի Հռովմայ, և Պապերն ալ ոչ միայն աշխարհական իշխանութենէն զուրկ էին, այլ նաև կայսրներէ կախումն ունէին : 488 ին Ռոմուակոնէ թագաւորը օրէնք հանեց

որ ոչ ոք կարող ըլլայ քահանայապետ ընտրուիլ առանց թագաւորական հաւանութեան, մանաւանդ թէ այս նիւթիս համար սուրբ ալ կը արժէր :

Շատ ժամանակէն վերջը կայսերական լուծը թօթափեցաւ, բայց ընտրութեան իրաւունքը ժողովրդեան անցաւ :

Ինչուան 798 ին կղերը, ազնուականք և ժողովուրդ զինավառեալք կը խմբէին հրապարակի մի կամ թէ եկեղեցւոյ մը մէջ՝ իւրաքանչիւրը իւր թաղին եւ դրօշակին ներքեւ, եւ հոն միաբանութեամբ ընտրութիւնը կը կատարէին :

Աւետարանին որ էջքին մէջ գրուած է որ Պապին ընտրութիւնը կարգինախնելը միայն պիտի ընեն. և ահա այս բանը կը հարցուի մինչև ցայժմ, որովհետև ժողովրդեան հաճութեանը հիմն է քրիստոնէութեան :

Երբոր Պապերը յաջողեցան քահանայապետական զլխաւորութիւնը ձեռքերնին անցնել, ուղեցին նաև աշխարհական իշխանութեամբ ալ փառաւորիլ :

Այս կէտիս աւատիկ մարդկութեան թշուառութիւնները սկիզբն կառնուն և մասնաւորապէս իտալիոյ, որն որ շատ չարչարանք քաշեց պապական իշխանութեան ձեռքէն՝ անոր հետ կապակցեալ ըլլալուն համար :

Այս կէտէն սկսեալ երեք ժամանակի շրջաններ կողան մեր ոլորմելի երկրին համար, որոնց մէջ յայտնի կը տեսնուի պապական իշխանութեան



հաստատուն նպատակը, որ էր մինչև ցերեկին բարձրացնել իրենց սահմանադրութիւնը և տերութիւնը՝ վատահամբաւ ընելով զսոսկականը և կործանելով բոլոր ազգը :

Առաջին շրջանին մէջ ի գործ դրուեցաւ կայսրութեան հետ եղած կռիւր, որպէս զի « իսաւրիոյ միութիւնը », արգելուի . երկրորդին մէջ խափանեցաւ « անկախութիւնը », յարատե օտարին միջամտութեանը դիմելով . երրորդ շրջանին մէջ, Տրիտենդեան Ժողովքէն, փրբենսիոյ հասարակապետութեան կործանմանէ և նորադանդութեան ծագմանէն վերջը, արգելուեցան « պատմութեան խոտման », և արարողութեանց ծագումը՝ և տարածումն ի ձեռն Աւստրիոյ եւ Սպանիոյ հետ կատարուած դաշնագրութեան, որուն հաղորդ գտնուեցան նաև քանի մը իտալացի իշխաններ :

Այս երեք շրջանին մէջ կը պարփակի պապական իշխանութեան դաւաճանութիւնը ընդդէմ իտալիոյ :

Յառաջ բերենք որ և իցէ պապի մը կենսագրութիւնը, ամենէն աւելի խորամանկին կամ աւելի ապուշին, ամենէն աւելի սրբոյն կամ աւելի խառնագնացին, թէ իշխան ըլլաց թէ աբեղայ, թէ երիտասարդ և թէ ծեր, կը տեսնանք, առանց անոնց մասնաւոր յատկութիւնները քննելու, թէ ինչպէս իւրաքանչիւրին կեանքը մի և նոյն նպատակին ուղղեալ է : Պիոս Թ. ք ոչ ինչ աւելի կամ նուազ գործեց քան զԳրիգոր Ժ. Գ. և Գրիգոր Ժ. Գ. Լեւոն Ժ. Բ. ին միւսնոյն գործողը հե-

տեւցաւ, այսինքն հալածել զհայրենասէրս : քստեղծել նորանոր տանջարաններ, փլասարել կառավարութիւն մը յառաջ տանել, հրաւեր կարգաւառ Աւստրիա և այլն և այլն :

Ինչ կրնէ Պեղագիտութ. 581 կն : Սարկաւագ մը կը խաւրէ Յունաց կայսեր արքունեաց, որպէս զի անոր զինորական ձեռնտունութիւնը խնդրէ Լոմպարտացոց դէմ, որոնք կողմէին միացնել զիտալիան : Ինչ քրաւ Գրիգոր Գ. երկու դար վերջը : Կանչեց կարգաւառն անուանեալ, Գաղղիոյ թագաւորը սը, զեւոք նարնստամատոց ըլլաց իրեն նոյն Լոմպարտացոց դէմ : Ինչ կրնէ Ստեփաննոս Բ. մէկ քանի դար յետոյ : Կը յիշէ Գրիգորը : Բայց չկարե նարով յօգնութիւն կանչել զկարողա Ռուս ( որով հետև մեռած էր ), Պեպինոսէն իւր յաջորդէն նպատակ կը խնդրէ, և ինքն անձամբ կերթայ ՚ի Գաղղիա զինուոց օգնականութիւն գտնալու համար, որպէս զի դարձեալ զիտալիան կարեւեր խոցէ :

Կուգայ Պեպինոս և կ'ստիպէ զԼոմպարտացիս յետս դառնալու, բայց հազիւ թէ ինքն կը մեկնի՝ կը դառնան դարձեալ Լոմպարտացիները իտալիոյ միութեան ձեռնարկութեանը համար, այն ատեն Ստեփաննոս Բ. կը կոչէ երկրորդ անգամ Գաղղիոյ թագաւորը :

Կը մեռնի Ստեփաննոս Բ. և իրեն յաջորդը Սթրիանոս կը շարունակէ նոյն քաղաքական դիտումը, դիմելով առ մեծն կարգաւառ և ահաւասիկ



նորէն Գաղղ իսկան բանակ մը կինջնայ Ալպեան լեռներէ՝ արեամբ թաթաւելու զ իսալ իան :

Յառաջ երթանք, չենք կրնար ճամբան կոր սրնցնել, որովհետեւ բոլորովին արեամբ ներկեալ է. իտալացի նահատակներ լուացին զայն իրենց արեամբը : Տեսնանք հիմայ տղաներորդ դարուն գէտքերը : Փերենգարիոս Բ. թագաւոր իտալ իոյ կը նեղէ զՅովհաննէս ԺԲ. ինչպէս վիկտոր էմնա նուէլ կը տանջէ զՊիոս Թ. ը, սակայն Յովհաննէս ԺԲ. ի նպաստ կը կոչէ Թիթոս Ա. Գերմանացի կայսեր զէնքերը : Շատ դարեր, քահանայապետաց հրաւիրմամբ Գերմանացիները յաջորդեցին Գաղղ իացոց՝ տառապեցնելու համար զ իտալ իան : Որոնք որ կրսեն թէ Պապական իշխանութիւնը հաստատուն պահեց միշտ իտալացոց անկախութիւնը Փրեդերիկոս Պարսոսային և Փրեդերիկոս Բ. ին ճակատամարտին մէջ, յիշեն որ Եւզինէոս Գ. Պապը և Անդրիանոս Գ. ը թախանձեցին Գորբատոս Գ. ին և Պապարոսոսային որ իրենց բանակ մը խրկեն ընդդէմ Հոովմէական Ժողովրդեան, որն որ երկոտասաններորդ դարուն մէջ պապական իշխանութեան լուծը թօթափելով հասարակապետութիւն մը հիմնած էր : Եւ արդեամբ ալ ինչ կը նշանակէր այն յանձնարարութիւնը՝ զոր Պարպարոսոսա ըրաւ Պապին որպէս զի պոսակէ զԱրնոլտոս սրբոյն Աետրոսի եկեղեցւոյն մէջ, եթէ ոչ՝ դաշինք մի հաստատել ի մէջ որոյ եւ ի մէջ քահանայական փորուրարին :

Ողբիանոս և Պարպարոսոսային մէջ ծագած պա-

տերազմին մի միայն պատճառը Պապական իշխանութեանց չտիազանց պահանջմունքներն էին, ոչն որ զօտարականները դահիճի և ըրտեսի տեղ կը ծառայեցնէր, զորոնք իւր կարօտութիւնը լեցընելէն յետոյ, աքացի զարնելով կը մերժէր :

Սակայն, եթէ յանկարծ իտալական տէրութիւն մը յաջողէր եղանակաւ մը Պապական իշխանութիւնը անշքացնել, ասիկայ շուտով կը խոնարհէր, կը կոչէր դարձեալ զօտարականը մինչև որ կարող ըլլայ իտալ իոյ միութիւնը խախտել :

Եւ ինչպէս պապական իշխանութիւնը կազատէ զմեզ Գերմանացոց կայսրներէ օգնութեան կանչելով զԳաղղ իացիները : Եւ ահաւասիկ կարօտս Անճիոյ հրաւիրելով յՈւրբանոս Գ. էն և անկէ խոստմունք առնելով Սիկիլիան ձեռք բերելու, կինջնայ յիտալ իա ընդդէմ կորրաղ ինտսի՝ որ վերջինն էր Զվեվեանց տէրութեան :

Յետագայ պատերը ասոնցմէ բնաւ զանազանութիւն մը չունեցան : Գրիգոր Ժ. Զ կանչեց Գերմանացիները և Պիոս Թ. հրաւիրեց Գերմանացիները և Գաղղ իացիները հետզհետէ :

Ինչպէս կը տեսնուի, բանը ալ առաջ պիտի երթար, եթէ Պապական իշխանութիւնը չարունակելու ըլլար, պիտի տեսնայինք ստուգիւ Տահիլներն ալ, որոնց համը արդէն Զուաֆներէն առինք :

Ամենայն ոք կրնայ համոզուիլ թէ այսպիսի մարտիրոսութիւն մը, որ մետասան դարէ աւելի կը տևէր՝ կրնար նաև շատ աւելի տևել : Սակայն



կրնանք ըսել թէ Պապին աշխարհական իշխանու  
 թիւնը ինքիքէն կործանեցաւ իւր զօրութեան  
 պահանջութեանը համար: Սենյտեմբեր 20 ին ոչ  
 թէ յարձակումն մը եղաւ, այլ պարսպապահ դին  
 ուորաց փոփոխութիւն մը: Հարթայտուակ եղան  
 արդէն իսկ փետեկեալ նարինայները:

Արդ կը մնայ մեզի քննելու թէ ինչպէս Պա  
 պական իշխանութիւնը հակառակեցան նաև դի  
 ստութեանց, սղատ խոկման և խղճմտանաց աղա  
 ստութեան դէմ: Սյա նիւթը աւելի ընդարձակ և  
 աւելի շահաւէտ է որովհետև մարմնաւոր կե  
 ղութիւնն աւելի աղետարեր եղաւ իտալիոյ հա  
 մար: սխաւածաւ ցգճմկրաւ քրաւք քիոյմ մայ

Սերիչ հատուածի և առթի մէջ այս նիւթիս  
 վրայ պիտի խօսինք, և դիտմամբ ալ, որովհետև  
 կը տեսնանք որ առթի կառավարութեան քանդա  
 քալարութիւնը կը միտի յաւէտ քահանայապետա  
 կան սճը շարունակելու սեփական զխողութեան  
 մը համար: ք ԶԵ որ քիչք մարմնաց զն միջիւս  
 հրամանագրէ բնոյ սոյճ . Պ սոյճ մ ցգճմկրաման

Ես մէքամք զգճմկրս քրաւք մ գգ ճմ  
 փոխա զն տա յա զնոց փամն մոս զք սճպչմ  
 սոյաչ զմ թի թմնոյ թի մամապաթ թի թ զգաթի թ  
 աչ սի ք տոս ցճմկրամն մոս քոյթա քալ յց սոյթիւս  
 ա թի թմնա տճ մի քրա զնոս քնոցս քա մի ճմնի թ  
 : ցճմի ո

դան փոխապա թի թի տրամաճ քամցի ցո մրամնի  
 զքի թմա թիւք մաստունն զս քն միջի թուստիս  
 մրախալ : յի մոս թի մ ա սոյա ժամ զանցի զի մոս



4752



2013





4595